ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ	Կիսաճտքավոր կոշիկներ՝ բաղկացած է քթամասից, մինչև ճտքերի վերևը բարձրացող հետնամասից, ամբողջական կողամասից, փափուկ եզրակից, միջնատակից, հիմնական ներդիրից, հանովի-դնովի ներդիրից, արտաքին ներբանից, 5 զույգ մետաղական կոճականցքերից, քուղերից: Ճիտքերի բարձրությունը 110 մմ+-2%: Երեսամասը պատրաստված է խոշոր եղջերավոր անասունի բնական սև կաշվից, մշակված անջրաթափանց ծածկույթով: Քթամասի և կրնկամասի կաշվի հաստությունը 1.6-1.8 մմ, ճտքերը՝ 1.4-1.6 մմ: Քուղերի անցքերը մշակվում են 5 զույգ մետաղական կոճականցքերով, որոնք երեսպատված են պաշտպանիչ շերտով, որը կապահովի խոնավ և ցածր ջերմաստիճանի պայմաններում կորոզիայից: Քուղերը պատրաստված են ամուր, անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, յուրաքանչյուրի վերջույթները թերմոմշակված են: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված 2.0-2.2 մմ հաստության բնական՝ կոշիկի համար նախատեսված ամբողջական ստվարաթղթից և նույն հաստության մինչև թաթը շարունակվող ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Կաշվե դետալները հակառակ կողմից մշակված կլինեն տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կհաղորդի չափավոր ծավալային կայունություն: Ներբանի (տակացուի) հաստությունը կլինի

		առնվազն 7.5-8.5 մմ, որից աշխատող (շփվող) շերտը՝ 4.5-5.0 մմ, չշփվող շերտը՝ առնվազն 3.0-3.5 մմ, իսկ կրունկի (գարշապարի) հաստությունը կլինի 20-21 մմ, որից աշխատող (շփվող) շերտը՝ 4.5-5.0 մմ, չշփվող շերտը՝ 15-16 մմ: Կողամասերի առնվազն 9 մմ ապահովում է հետքերի ինքնամաքրում: Ամրանում է բարձր ճնշմամբ, սոսնձման եղանակով: Պատրաստված կլինի մաշակայուն թերմոպլաստիկ կաուչուկից: Ներբանը գետնին հպվում է հարթ, առանց ճոճվածքի: Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է կաշվով, որի միջուկը մշակվում է 2 մմ հաստությամբ ինքնասոսնձվող պոլիեթիլենային փրփուրով: Միջնատակը՝ շնչող, ծակոտկեն գործվածքից, որը երեսպատված է առաձգական, ծակոտկեն սինթետիկ նյութով, ինչն էլ հաղորդում է կոշիկի ներսի ծածկույթին հավելյալ փափկություն և հարմարավետություն: Հանովի-դնովի ներդիրը պատրաստված կլինի բնական կաշվի և պոլեուրետան հումքի համադրությունից, ամրացման եղանակը՝ միաձույլ (прямое литьё), որը կապահովի հավելյալ ամրություն և երկար օգտագործում: Կոշիկի քթամասը և կրնկամասը մշակված կլինի պինգ-պոնգ տեսակի թերմոպլաստիկ նյութով, որը կհաղորդի կոշիկին հավելյալ ամրություն և առաձգականություն: Կոշիկի կաղապարը համապատասխանում է ԳՈՍՏ 3927-88-ի պահանջներին: Արտաքին տեսքը համաձայնեցվում է Գնորդի հետ: Փաթեթավորումը ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 10-15 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա նշված կլինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Կոշիկի չափերի քանակները տրամադրվում է Գնորդի կողմից: Արտադրվում է 38-47 չափերի: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО АШОТ КАРАГЕЗЯН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
11	-	-